

**ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԶԱԼԻ ԳԱՎԱԹ 2021» ՄՐՑԱՇԱՐԸ**

31.05.2021 16:11




Սույն թվականի **մայիսի 30-ին** մեկնարկել է ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կազմակերպած՝ **«Փաստաբանների ֆուտզալի գավաթ 2021»** մրցաշարը: Մրցաշարին մասնակցում են ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների և «Փաստաբանական դպրոցի» ունկնդիրների թիմերը:

Առաջին փուլի՝ խմբային խաղերում ուժերը չափեցին «Վիրտուոզ», «Զարթոնք», «Տավուշ» և «Չեմպիոն» թիմերը: **Առաջին խմբի խաղերի արդյունքներով առաջատարը «Չեմպիոն» թիմն է** (մասնակիցներ՝ Վազգեն Միրզոյան, Երեմ Դավթյան, Վազգեն Ղազարյան, Գևորգ Դավթյան, Հայկ Սարգսյան, Դավիթ Բաղդասարյան):

Մրցաշարը շարունակվում է, **մյուս խմբի խաղերը տեղի կունենան 2021թ-ի հունիսի 6-ին:**

Մրցաշարի եզրափակիչ խաղերը և արդյունքները կամփոփվեն **2021թ-ի հունիսի 13-ին:**











Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })